

Պատրիարքարան Հայոց

Կոստանդնուպոլիս

Թիւ 1 / 552

19 Յուլիս 1888

Գերապատիւ Սիրելի,

Քիլիսէն Տէր Յովհաննէս քահանայ իւր մէկ գրութեամբ կը ծանուցանէ, թէ այս տարի եւս դատարանի անդամոյ ընտրութեան առթիւ քուէից առաւելութիւն շահեր է Գեորգ Էֆէնտի Պայրամեանը, սակայն իւր ընտրութիւնը հինգ ամիսէ ի վեր չէ հաստատուեր, եւ խնդրած է պէտք եղած տնօրէնութիւնը, որպէս զի Պայրամեան Էֆէնտի տեղ նուազ քուէ ստացող հռովմէական մը չկոչուի ի պաշտօն, ինչպէս եղեր է անցեալ տարի:

Սոյն խնդիրն Ձեր Գերապատուութեան հաղորդելով՝ կը յանձնարարենք. որ մտերմական կերպով հարկ եղած միջնորդութիւնը ընէք Վսեմ. Կոստակալին մօտ, եւ ջանուհնար լինէք, որ հայ անդամին ընտրութիւնը հաստատուի:

Մնամք աղօթարար.

Պատրիարքական Տեղապահ

Սիմէոն Եպիսկոպոս Մէֆերէնց

Գերապատիւ

Տ. Մովսէս Վրդ. Կեօմրիկճեան

Բարեջան Առաջնորդ Հալէպի